Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N11 -ՀԽ

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

22.09.2017թ քՔ.Երևան
Ժամը 17[30]

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ս.Այվազյան Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Գ. Օգանեզովա ‹‹Հայկական բուսաբանական ընկերություն›› ՀԿ
Ի. Զարաֆյան «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Մ.Զաքրյան «Հնարային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ
Հ.Սանասարյան «Հայաստանի կանաչների միություն» ՀԿ
Ս. Ադամյան «Էկոլոգիական հասարակական միություն» ՀԿ
Ա.Համբարձումյան «Հասարակական ձայն» ՀԿ
Հ. Ալոյան «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» ՀԿ
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

Ա. Աղասյան ՀՀ բնապահպանության նախարարության կենսառեսուրսների կառավարման գործակալություն
Ա. Պեպանյան ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական
Ա. Ղարաբեգյան ՀՀ բնապահպանության նախարարի իրավախորհրդատու

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հարց 1.

«Խոսրովի անտառ» պետական արգելոցում և ՀՀ անտառապատ այլ տարածքներում բռնկված հրդեհների հետևանքները, վնասված տարածքների վերականգնման ուղղությամբ իրականացված դիտարկումների արդյունքները:

Հարց.2

Նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ հանրային լսումներ անցկացնելու անհրաժեշտությունը

Ելույթով հանդես եկավ Արամ Աղասյանը- Ներկայացնելով հրդեհի բռնկման ու տարածման ժամանակագրությունը, վնասված տարածքների չափերը, փաստեց, որ այրված տարածքներում բազմաթիվ են չվնասված կղզյակները, որոնք ոչ միայն կենդանիների ապաստարան են հանդիսացել, այլ հետագայում կնպաստեն կենսաբազմազանության արագ վերականգնմանը: Ընդհանուր վնասված 2200 հեկտար տարածքից, չվառված տարածքները կազմում են 365 հեկտար: Ըստ բանախոսի, քամու հետևանքով արագ տարածված կրակը մեծամասամբ չի վնասել բույսերի արմատային համակարգը և հրդեհից արդեն 20 օր անց արձանագրվել են խոտերի և ծառերի բնական վերականգնման բազմաթիվ դեպքեր, սակայն վնասի վերջնական չափը հնարավոր կլինի գնահատել միայն հաջորդ տարվա գարնանը:

Ելույթով հանդես եկավ Արեգ Ղարաբեգյանը-ներկայացրեց ԱՄՆ կառավարության օժանդակությամբ ստացված արբանյակային լուսանկարների վերլուծությունը, ինչպես նաև արգելոցում և Արտավանի անտառներում Միացյալ Նահանգների անտառային ծառայության «Այրված տարածքների վերականգնման և արտակարգ իրավիճակների կանխարգելման» աշխատանքային խմբի անդամների դիտարկումների նախնական տվյալները: Վերջիններս արձանագրել են բուսականության արագ վերականգնում և հողերի վերին շերտի ոչ խորքային ջերմային վնասում, ինչը թույլ է տալիս կանխատեսել, որ բուսական աշխարհի վերականգնումն արագ է տեղի ունենալու, բացառությամբ գիհի ծառատեսակի, իսկ կենդանական աշխարհի էական վնասներ չեն արձանագրվել: Խումբը պաշտոնական ամբողջական եզրակացությունը և առաջարկները երկու երկրների կառավարություններին կներկայացվի ավելի ուշ: Խորհրդի անդամներին հայտնեց, որ ըստ արբանյակային լուսանկարների՝ հրդեհի բռնկման 5 օջախ է արձանագրված, որոնցից մեկը մյուս 4-ից գտնվում է զգալի հեռավորության վրա և հավելեց, որ այդ լուսանկարները կօգնեն քննություն վարող լիազոր մարմնին բացահայտել հրդեհի բռնկման պատճառները:

Ելույթով հանդես եկավ Արծվիկ Մինասյանը-Ներկայացրեց աղետի ժամանակ լիազոր գերատեսչությունների կատարված քայլերը և կատարած հետևությունները՝ հայտնելով, որ հրդեհի և դրան հաջորդած հետմարման միջոցառումների 24 օրերը ոչ միայն բոլորի համար լուրջ դաս էր, այլ նաև ոլորտում ի հայտ բերեց հիմնարար բացեր: Հիմնական բացերից մեկը կապի միջոցների բացակայությունն էր և այդ մասին զեկուցվել է ՀՀ Նախագահի ու վարչապետի մոտ կայացած քննարկումների ընթացքում: Տեղեկացրեց, որՀՀ Նախագահը հանձնարարել է Հայաստանի կապի օպերատորների հետ քննարկել և հարցին լուծում տալ, ինչին արձագանքել է ՎիվաՍել-ՄՏՍ ընկերությունը և ներկայում այնպիսի կապի համակարգ է դիտարկվում, որով արգելոցում նվազագույն միջամտությամբ կապահովվի օդային կապ,

ինչն իր հերթին կօգտագործվի ոչ միայն հրդեհների կանխարգելման, այլ նաև մոնիթորինգ իրականացնելու համար: Նշեց, որ նախատեսվում է «Խոսրովի անտառ» պետական արգելոցում իրականացնել նաև կադրային և կառուցվածքային հիմնարար փոփոխություններ՝ լուծելու օպերատիվ արձագանքման, արագ գործողություններ իրականացնելու և պահպանության /24 ժամյա/ մակարդակը բարձրացնելու հարցերը: Նախարարն առաջնային համարեց տեխնիկական զինվածության հարցերի լուծումը, ինչի ուղղությամբ բանակցություններ են տարվում գործընկեր պետությունների և դոնոր կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով երկրում ունենալ հրդեհներին հակազդող տեխնիկապես հագեցած համակարգեր:
Թվարկված խնդիրների լուծման համար պահանջվում են զգալի միջոցներ ներգրավել պահպանվող տարածքներում էկոտուրիզմի զարգացումից և «Բնության պահպանություն՝ պարտքի դիմաց» գործընթացից:

Առաջարկով հանդես եկավ Հակոբ Սանասարյանը-Առաջարկեց Խորհրդի օրակարգերից մեկում ընդգրկել Ամուլսարի հարևանությամբ գտնվող բնական լճակի տարածքում կատարվող հողաշինական աշխատանքներին:

Որոշվեց

Հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝ պարզաբանում ներկայացնել բարձրացված հարցի վերաբերյալ և դիտարկել հարցը խորհրդի առաջիկա նիստերի օրակարգ մտցնելու նպատակահարմարությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

Արձանագրեց
Ա.Վարդանյանը